

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԴԱՎԹՅԱՆ ՌԻՏԱ ԲՈՐԻԿԻ

**«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ
ԸՆՏՐՈՎԻ ՆՅՈՒԹԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ**

ԺԳ.00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ե.Ս. Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ա.Ա.Չատինյան**
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ս.Մ.Աբրահամյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական սլավոնական
համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. փետրվարի 23-ին
ժամը 14⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի 8-րդ մասնաշենք, թիվ
203 լսարան:


Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունվարի 23-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

 **Ա.Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Դպրոցահասակ երեխաների ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների լուծման հարցում առաջնային նշանակություն են ստանում ֆիզիկական դաստիարակության առաջադեմ գաղափարների ներդրումը պրակտիկա, նորարական միջոցների ու մեթոդների մշակումը և դրանց կիրառումը ֆիզիկական դաստիարակության գործընթացում: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրության են արժանանում հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրային նյութի լիարժեք դասավանդման հիմնահարցերը:

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ինչպես արտասահմանյան երկրներում, այդպես էլ Հայաստանի Հանրապետության «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրերը կազմված են երկու բաղադրիչից՝ բազային և ընտրովի նյութից: Ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետության ապահովման կարևորագույն նախապայման է՝ չափորոշիչ ծրագրի նյութի բովանդակության լիարժեք յուրացումը, երեխաների անհատական պահանջմունքների և հետաքրքրությունների, տարածաշրջանի բնակլիմայական պայմանների հաշվառմամբ:

Միևնույն ժամանակ դպրոցական ֆիզկուլտուրային կրթության ոլորտում կատարված գիտամեթոդական աշխատանքների մեծամասնությունը նվիրված է ծրագրի բազային բաղադրիչի ուսումնասիրությանը (Н.А.Карлушко, 1992, В.И.Лях, Г.Б.Мейксон, 1993; С.Д.Неверкович, С.П.Киришев, 1997, В.И. Лях, А.А. Зданевич, 2010 и др.): Դեռևս քիչ են մշակված ուսումնական ծրագրերի ընտրովի նյութի դասավանդումն ու կազմակերպումը:

Հետևաբար ընդգծվում է ծրագրի ընտրովի բաղադրիչի դասավանդման գիտական հիմնավորման անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ ակնհայտ է հակասություն, որն արտահայտվում է.

1. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրերում հստակ ամրագրված ընտրովի նյութի բաղադրիչի առկայության և պրակտիկայում դրա ոչ լիարժեք իրականացման միջև,

2. ծրագրի ընտրովի նյութի դասավանդման անհրաժեշտության և գիտամեթոդական գրականության մեջ դրա կիրառման մեթոդիկայի ոչ լիովին մշակման միջև:

Հետևաբար, հանրակրթական դպրոցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդման վիճակի ուսումնասիրումը և դրա բարելավման ուղիների մշակումը արդիական հիմնահարց է և ունի կարևոր գիտագործնական նշանակություն:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութի դասավանդման առանձնահատկությունները և մշակել նրա բարելավման մեթոդիկան:

Հետազոտության խնդիրները:

1. Բացահայտել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի՝ ընտրովի նյութի դասավանդման վիճակը:
2. Որոշել Տավուշի մարզի դպրոցների 5-12-րդ դասարանների սովորողների առողջական վիճակի և շարժողական պատրաստության մակարդակը:
3. Մշակել և գիտափորձով հիմնավորել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդման մեթոդիկան:
4. Բացահայտել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութի դասավանդման արդյունավետությունը:

Հետազոտության գիտական նորույթը.

- ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի դպրոցականների ֆիզիկական զարգացման, ֆունկցիոնալ վիճակի և շարժողական պատրաստվածության սեռատարիքային առանձնահատկությունները,
- բացահայտվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդման վիճակը հանրակրթական դպրոցում,
- մշակվել և գիտափորձով հիմնավորվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութի դասավանդման մեթոդիկան, որի հիմքն ակադեմիական դասի և արտադասարանական պարապմունքների համադրումն է:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 5-12-րդ դասարանների դպրոցականների ֆիզիկական զարգացման, ֆունկցիոնալ վիճակի և շարժողական պատրաստվածության մակարդակը՝ որպես ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման նախապայման:

2. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութի դասավանդման ներկա վիճակը թույլ չի տալիս լիարժեք ապահովելու դպրոցականների ֆիզկուլտուրային կրթությունը:

3. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութի դասավանդման մեթոդիկան, շաղկապելով հանրակրթական դպրոցի ֆիզիկական դաստիարակության կազմակերպման դասային և արտադասարանական ձևերը, ապահովում է դպրոցականների առողջական վիճակի և շարժողական պատրաստվածության բարելավումը, ֆիզկուլտուրային կրթության որակի բարձրացումը:

Հետազոտության տեսական նշանակությունը: «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութի դասավանդման

նոր մոտեցումները մատնանշում են դպրոցականների շարժողական ակտիվության և ֆիզիկական պատրաստվածության, ֆիզկուլտուրային կրթվածության բարելավման արդյունավետ ուղղությունները: Ընդլայնվում են մասնագետների պատկերացումները դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործման մասին:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մշակված մեթոդիկան նպաստում է դպրոցականների շարժողական ակտիվության, առողջական վիճակի և ֆիզիկական պատրաստվածության բարելավմանը, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը շարադրված է համակարգչային 124 էջում: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, ընդգրկում է 16 աղյուսակ, 20 տրամագիր, 5 հավելված: Գրականության ցանկում բերված են 139 մատենագիտական սկզբնաղբյուրներ:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորոյթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

«**Հետազոտության հիմնահարցը**» խորագրով առաջին գլուխում, որը բաղկացած է հինգ ենթագլուխներից, ամփոփ ներկայացված են դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործման համար տարբեր մոտեցումներ, ինչպես ֆիզիկական կուլտուրայի դասերի արդյունավետության բարձրացման, այնպես էլ արտադասարանական աշխատանքների ակտիվացման ուղղությամբ: Հաստատված է, որ ֆիզիկական դաստիարակության արդյունավետ կազմակերպման երաշխիքը՝ համալիր մոտեցման սկզբունքի կիրառումն է:

Հայտնի է, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից ճիշտ մշակված ուսումնական ծրագիրը դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգի գործունեության կարևորագույն պայմանն է:

Կատարվել է ազգային դպրոցի և Խորհրդային Միության ժամանակ հրատարակված 50 տարվա կտրվածքով (1960-2012թթ.) հանրակրթական դպրոցի ֆիզիկական դաստիարակության ծրագրերի բովանդակային վերլուծություն (content analysis): Ուսումնասիրվել են ընտրովի նյութի բովանդակությունը և հատկացված ժամաքանակը:

Վերլուծությունը ցույց տվեց, որ հանրակրթական դպրոցի ֆիզիկական դաստիարակության ծրագրերում ուսումնական նյութը տարիներ շարունակ ներկայացված է երկու բաղադրիչով՝ բազային և ընտրովի: Այն նկատառումով, որ ուսումնառության տարիների ընթացքում ընտրովի նյութի բովանդակությունը և հատկացված ժամերը բազային նյութի հետ մեկտեղ պետք է ապահովեն դպրոցականների ընդհանուր ֆիզիկական պատրաստությունը, ձևավորեն բազմազան շարժողական կարողություններ և հմտություններ, ի վերջո, ապահովեն սովորողների համակողմանի, ներդաշնակ զարգացումը:

Գիտական առումով հիմնական հարցը կայանում է ծրագրի բազային և ընտրովի նյութի օպտիմալ հարաբերության բացահայտման մեջ՝ տարրական, միջին, ավագ դպրոցների համար:

Մասնագետների կարծիքով հանրակրթական դպրոցում միայն ֆիզիկական կուլտուրայի դասերի միջոցով հնարավոր չէ լուծել այս խնդիրը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում մշակել և ներդնել դպրոցական համակարգ, նորարական տեխնոլոգիաներ և մեթոդիկաներ, որոնք կբարձրացնեն սովորողների շարժողական ակտիվության ծավալը, կապահովեն բարձր առողջարարական արդյունք, կնպաստեն ֆիզիկական դաստիարակության գործընթացի օպտիմալացմանը:

Հատկանշանական է այն փաստը, որ գրեթե բոլոր երկրների ֆիզիկական դաստիարակության ծրագրերում առկա է ինչպես պարտադիր նյութ (բազային), այնպես էլ ընտրովի, երբ սովորողներին առաջարկվում է զբաղվել որևէ մարզաձևով: Հայաստանի Հանրապետության «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրում ուսումնական նյութը ներկայացված է երկու բաղադրիչով՝ բազային և ընտրովի:

Սակայն դիտումները ցույց են տալիս, որ գործնականում ծրագրի ընտրովի նյութը լիովին չի իրականացվում, ակնհայտ են բազում պատճառներ. բացակայում են ինչպես անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ, այնպես էլ գիտամեթոդական հիմնավորված մշակումներ ուսուցիչների համար դրա կազմակերպման և անցկացման նպատակով:

Հետևաբար խնդիր է առաջանում մշակել ծրագրի ընտրովի ուսումնական նյութի դասավանդման մեթոդիկա:

Ատենախոսության **երկրորդ՝ «Տավուշի մարզի դպրոցականների առողջական վիճակի և ֆիզիկական պատրաստվածության հետազոտումը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Գրական աղբյուրների ուսումնասիրության և վերլուծության արդյունքները փաստում են, որ քաղաքում և շրջանում բնակվող երեխաների ֆիզիկական զարգացման ցուցանիշները և շարժողական պատրաստվածությունը տարբերվում են (Է.Ա. Калюжный, 2007, Թ.Լ. Մկրտչյան, 2016):

Հետևաբար հանրապետության տարբեր շրջաններում բնակվող դպրոցականների առողջական վիճակի հետազոտումն արդիական է և ունի կարևոր գործնական նշանակություն:

Հետազոտությանը մասնակցել են Իջևան քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցի, Ինչպես նաև Տավուշի մարզի՝ Այրում, Նորաշեն, Գետահովիտ, Ծաղկավան գյուղերի միջնակարգ դպրոցների V-XII դասարանների 408 աշակերտ՝ 212 տղա և 196 աղջիկ:

Դպրոցականների ֆիզիկական զարգացման առանձին ցուցանիշների տարիքային դինամիկայի վերլուծությունը բոլոր տարիքային խմբերում ցույց է տալիս զարգացման միջին մակարդակի գերակայությունը [Ֆ.Գ. Ղազարյան, 2007]: Ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների մոտ նկատվում է զարգացման որոշակի անհավասարաչափություն:

Տավուշի մարզի V-XII դասարանների սովորողների սրտանոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի հետազոտումը թույլ է տալիս փաստել նրանց բավարար ֆունկցիոնալ հնարավորությունների մասին: Դպրոցականների ֆիզիկական աշխատունակության ցածր մակարդակը վկայում է, որ դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգում միայն ֆիզիկական կուլտուրայի դասերը չեն կարող ապահովվել սովորողների շարժողական ակտիվության անհրաժեշտ ծավալը և որպես հետևանք՝ բարձր ֆունկցիոնալ վիճակ:


V-XII դասարանների աշակերտների շարժողական ընդունակությունների թեստավորման արդյունքները թույլ է տալիս հաստատել, որ տարիքի հետ պահանջվող նորմերի վերաբերյալ տեղի է ունենում երկու սեռի դպրոցականների շարժողական պատրաստվածության մակարդակի վատացում: Այսպես՝ 1000 մ վազքում V-XII դասարանների հետազոտվող տղաների 83,72%-ը և աղջիկների 89,96%-ը ցուցադրել են արդյունքների ցածր մակարդակ, ինչը վկայում է դպրոցականների անբավարար ֆունկցիոնալ կարողությունների մասին: Գրեթե նույն պատկերը դիտվում է դպրոցականների ուժային ընդունակությունները գնահատող ցուցանիշների վերլուծության ժամանակ: Անցկացված հետազոտության արդյունքում պետք է փաստել Իջևան քաղաքում և Տավուշի մարզում բնակվող ժամանակակից դպրոցականների ցածր ֆունկցիոնալ կարողությունները:

Բացահայտված միտումը բացատրվում է ինչպես օբյեկտիվ սոցիալ-տնտեսական կենսապայմաններով, այնպես էլ ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ձևերի հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործմամբ, նաև հանրապետության շրջաններում մանկապատանեկան մարզադպրոցների և այլ կրթադաստիարակչական հաստատությունների պակասով: Հետազոտության արդյունքում ստացված տվյալները վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է մարզերի մակարդակով մշակել ֆիզիկական

դաստիարակության նոր տեխնոլոգիաներ, ուղղված՝ դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակմանը, օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացմանը, նրանց առողջության պահպանմանն ու ամրապնդմանը: Ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործման ժամանակակից փուլում հանրապետության գյուղական շրջանների դպրոցականների ֆիզիկական կուլտուրայի բովանդակության և կազմակերպման առանձնահատկությունը պայմանավորված է տարածաշրջանի կլիմայա-աշխարհագրական բնակության և ուսման սոցիալական պայմաններով: Այն պետք է արտացոլի սովորողների պահանջը բարձր շարժողական ակտիվության նկատմամբ:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդման վիճակը հանրակրթական դպրոցում (ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների) խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը: Հարցմանը մասնակցել են Երևան քաղաքի 55 և մարզերի 46 ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ:

Հարցման արդյունքում բացահայտվեց, որ ներկա պայմաններում ծրագրով նախատեսված ընտրովի նյութը գրեթե չի կիրառվում դպրոցում (տրամագիր 1):



Տրամագիր 1. Ուսուցիչների կարծիքը ընտրովի նյութի անցկացման վերաբերյալ(%)

Մեր կողմից բացահայտված խոչընդոտող պատճառներից ելնելով՝ առաջին պլան է մղվում ընտրովի նյութի դասավանդման մեթոդիկայի մշակումը: Հարկ է նշել, որ հատկացված ծրագրով ընտրովի նյութի ժամերը չեն կարող նպաստել նրա արդյունավետ յուրացմանը: Այդ հիմնահարցի լուծման ուղիներից մեկը մենք տեսնում ենք ծրագրային նյութի իրականացումը ոչ միայն դասերի ընթացքում, այլև արտադասարանական պարապմունքներում, ինչը կապահովի դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի տարբեր ձևերի փոխադարձ կապը և միասնությունը:

Ատենախոսության երրորդ՝ ««Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդման մեթոդիկան» գլխում, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, քնարկվում են մանկավարժական գիտափորձի արդյունքները:


Մանկավարժական գիտափորձի պլանավորման ընթացքում հիմք է ընդունվել համալիր մոտեցման սկզբունքը. ֆիզիկական դաստիարակության դասային և ոչ դասային ձևերի համակցումը, ուսուցման և դաստիարակության բազմազան միջոցների և մեթոդների կիրառումը:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերի ընթացքում ընտրովի նյութին ծրագրով հատկացված ժամերն օգտագործվել են առավելապես կրթական խնդիրները լուծելու համար՝ հաղորդվել են գիտելիքներ, ձևավորվել են շարժողական կարողություններ և հմտություններ: Ընտրած նյութի ամրապնդումը և կատարելագործումը կազմակերպվել է արտաժամյա՝ սեկցիոն պարապմունքներին: Սեկցիոն պարապմունքների ընթացքում շեշտադրվել է առողջարարական և մարզական խնդիրների լուծումը: Մանկավարժական գիտափորձը կազմակերպվել է ուսումնական ծրագրի առաջարկված ընտրովի նյութի երկու տարբերակով՝ սեղանի թենիս և ուժային պատրաստություն: 2-րդ տրամագրում ներկայացված է ընտրովի նյութի դասավանդման տեխնոլոգիան:

Գիտափորձը կազմակերպվել է երկու ուսումնական տարիների ընթացքում՝ 2012-2014թթ. Իջևան քաղաքի թիվ 5 դպրոցի 7-րդ դասարանում՝ սեղանի թենիսի (փորձարարական 1 խումբ) և Տավուշի մարզի Գետահովիտ գյուղի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում՝ ուժային պատրաստության (փորձարարական 2-րդ խումբ) օրինակով:

Երկամյա մանկավարժական գիտափորձի ընթացքում դպրոցականների կողմից ձեռք բերված գիտելիքները, ձևավորված շարժողական կարողությունները և հմտությունները գնահատվել են երեք մակարդակով՝ նվազագույն, միջին և առավելագույն, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի պահանջներին համապատասխան:

Երկրորդ փորձարարական խմբում դպրոցականները 7-րդ դասարանում ուժային պատրաստությունից տեղեկություն են ստացել մկանային ուժի մշակման միջոցների և մեթոդների մասին: Ուսուցանվել են տարբեր մկանախմբերի մշակման համար վարժությունների համալիրներ կցազնդերով, ռետինե լարանով, առանց առարկաների՝ սեփական քաշի հաղթահարմամբ, զույգերով: 8-րդ դասարանում դպրոցականները տեղեկություն են ստացել սեփական մկանային ուժի ինքնուրույն մշակման մեթոդիկայի մասին, ուժային վարժությունների ստուգողական պահանջների




Տրամագիր 2. Ընտրովի նյութի դասավանդման տեխնոլոգիան (ՌԺԱԿԻՆ պատրաստության օրինակով)

վերաբերյալ: Սովորողների մոտ ձևավորվել է մարզասարքերի վրա ուժային վարժությունների կատարելու կարողություն:


Դպրոցականները վարել են տետր՝ «Ուժային պատրաստություն» խորագրով, որտեղ սովորողները նշել են ուժային ընդունակության կիրառման նշանակությունը ֆիզիկական պատրաստության անհրաժեշտ մակարդակի ապահովման գործում, առօրյայում դրա կիրառելիության մասին: Հատուկ առանձնացվել են հիմնական մկանախմբերը, որոնք պետք է զարգացնել, վարժությունների նկարագրումը և թեստավորման արդյունքների գրանցումը:

3-րդ տրամագրում ներկայացված են գիտելիքների և կարողությունների ձեռքբերման մակարդակի շարժընթացը մանկավարժական գիտափորձի ընթացքում: Ուշագրավ է, որ գիտափորձից հետո և՛ տղաների, և՛ աղջիկների մոտ գրանցվել է գիտելիքների, կարողությունների ու հմտությունների միջին և առավելագույն մակարդակ:

Աղջիկներ



Տղաներ



Տրամագիր 3. Ուժային պատրաստությունից գիտելիքների և կարողությունների ձեռքբերման մակարդակի շարժընթացը մանկավարժական գիտափորձի ընթացքում (%):

Հարկ է նշել, որ տղաների 61,55%-ը ցուցաբերել են ուժային պատրաստության վերաբերյալ ձևավորված գիտելիքների ու կարողությունների տիրապետման առավելագույն մակարակ: Այն առանձնակի կարևորվում է պատանիներին բանակում ծառայելու պատրաստության համար:


Այսպիսով՝ ստացած արդյունքները փաստում են, որ մանկավարժական գիտափորձի ընթացքում սովորողները ձեռք են բերել անհրաժեշտ գիտելիքներ և շարժողական կարողություններ ընտրովի նյութից, ինչը հնարավորություն տվեց հարստացնելու դպրոցականների գիտելիքները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից, ընդլայնելու շարժումների զինանոցը:

Մանկավարժական գիտափորձի ընթացքում գրանցվել են սրտանոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի որոշակի փոփոխություններ, սակայն այդ փոփոխությունները միանման չեն: Փորձարարական և ստուգողական խմբերի երկու սեռի դպրոցականների մոտ անոթազարկի և զարկերակային ճնշման ցուցանիշների դինամիկայում նկատվում են որոշակի փոփոխություններ, որոնք համապատասխանում են գրականության մեջ սահմանված տարիքային նորմերին:

Ինչ վերաբերվում է ֆիզիկական աշխատունակությունն արտացոլող Ռուֆիե ինդեքսի տվյալներին, ապա այստեղ երկամյա մանկավարժական գիտափորձի ընթացքում դիտվում են որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ երկու փորձարարական խմբերում ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների մոտ գիտափորձի ավարտին գրանցվել են Ռուֆիեի ինդեքսի հավաստի փոփոխություններ (տղաներ՝ $t = 2,61-2,74, P < 0,05$, , աղջիկներ՝ $t = 6,21-5,34, P < 0,001$): Ուշագրավ է, որ երկու փորձարարական խմբերում էլ՝ և տղաների և աղջիկների մոտ ֆիզիկական աշխատունակությունը գիտափորձի ընթացքում փոխվել է միջինից լավ գնահատականի (С.В. Хрычев, 1991): Ստուգողական խմբում գրանցված երկսեռ դպրոցականների ֆիզիկական աշխատունակության ցածր մակարդակը միանգամայն հաստատում է այն կարծիքը, որ մասնակցությունը միայն ֆիզիկական կուլտուրայի դասերին չի կարող ապահովել սովորողների շարժողական ակտիվության անհրաժեշտ ծավալը և որպես հետևանք՝ բարձր ֆունկցիոնալ վիճակ (տրամագիր 4):

Երկամյա մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ թե ստուգողական, թե փորձարարական խմբերում տղաների և աղջիկների շարժողական պատրաստվածության ցուցանիշներն աճում են, որը լիովին համապատասխանում է տարիքային զարգացման օրինաչափություններին (աղյուսակ 1): Սակայն այդ փոփոխությունները միանշանակ չեն: Այսպես՝ փորձարարական 1-ին խմբում տղաների արդյունքը 1000մ վազքում գիտափորձից հետո բարելավվել է միջինում 90,48 վրկ. ($t=6,19, P < 0,001$), իսկ աղջիկներինը՝ 79,64 վրկ. ($t=4,54, P < 0,001$):

Փորձարարական 2-րդ խմբում արդյունքները համապատասխանաբար աճել են՝ տղաների մոտ 94,05 վրկ. ($t=5,24, P<0,001$), աղջիկների՝ 82,73 վրկ. ($t=4,18, P<0,001$):



Տրամագիր 4. Տղաների ֆիզիկական աշխատունակության շարժընթացը գիտափորձի ընթացքում (ըստ Ռուֆիեի ինդեքսի)

Ստուգողական խմբում ընդհանուր դիմացկունության ցուցանիշների փոփոխությունները գիտափորձից հետո հավաստի չեն (տղաներ՝ 355,32 վրկ-ից – 331,1 վրկ., $P>0,05$, աղջիկներ՝ 397,9 վրկ-ից- 369,45 վրկ., $P>0,05$): Ստուգողական խմբի երկու սեռի դպրոցականների մոտ ստացած արդյունքները գտնվում են ցածր մակարդակի վրա: Այդ փաստի վրա անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, քանի որ այն արտացոլում է երեխաների սրտանոթային և շնչառական համակարգերի ֆունկցիոնալ վիճակը, ինչպես նաև ֆիզիկական աշխատունակությունը: Հարկ է ընդգծել նաև, որ ընդհանուր դիմացկունության մշակումը պատանիների՝ բանակում ծառայության պատրաստման կարևորագույն գործոն է:

Դպրոցականների շարժողական պատրաստության գործընթացում հատուկ տեղ են զբաղեցնում ուժային ընդունակությունների դրսևորումները: Աշխատանքում ներկայացված են մանկավարժական գիտափորձի ընթացքում դպրոցականների վերին վերջույթների, որովայնի մկանների և ստորին վերջույթների ուժային և արագաուժային ցուցանիշների շարժընթացը:

Երեք ուժային վարժությունների արդյունքների վերլուծությունը բացահայտեց փորձարարական 2-րդ խմբի երկսեռ դպրոցականների բացարձակ առավելությունը: Այն մեկ անգամ ևս հաստատեց նպատակաուղղված ուժային ընդունակությունների մշակման անհրաժեշտությունը: Այստեղ նույնպես պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ միայն

Տղաների ֆիզիկական պատրաստվածության ցուցանիշների շարժընթացը մանկավարժական գիտափորձի ընթացքում (X±m)

Խմբեր, հետազոտման փուլեր	Վազք 30մ(վրկ.)	Վազք 1000մ(վրկ)	Հոտացատկ տողից (սմ)	Սարդա-վազք 4x9մ (վրկ)	Թեքում առաջ կանգնած դիրքից (սմ)	Վերձգում ներ (քան.)	Իրանի թեքում առաջ պարկած դիրքից Իր. (քան.)
Փորձ 1	Միջ. գիտափորձ	6,27±0,1	378,9±10,2	156,46±5,43	13,79±0,89	4,09±0,64	29,0±1,48
	1 տարի հետո	5,25±0,3	310±12,1	167,48±3,8	10,94±0,17	5,26±0,79	35,63±0,94
	Գիտափորձից հետո	4,53±0,3	288,42±10,47	178,63±3,6	9,77±0,13	6,63±0,88	36,6±1,6
Փորձ 2	Միջ. գիտափորձ	5,49±0,08	357,42±14,14	174,57±2,75	12,3±0,2	3,53±0,79	29,62±0,79
	1 տարի հետո	4,57±0,08	325,36±9,33	202,47±18,18	10,46±0,12	4,0±0,6	36,45±1,08
	Գիտափորձից հետո	4,16±0,65	263,37±11,03	221,5±7,8	9,56±0,12	8,33±0,73	40,86±1,68
Ստուգ.	Միջ. գիտափորձ	6,6±0,72	355,32±9,0	156,17±3,9	13,8±0,8	3,07±0,5	30,42±1,46
	1 տարի հետո	6,21±0,16	340,25±8,6	159,6±4,54	12,67±0,37	3,94±0,48	33,9±1,1
	Գիտափորձից հետո	6,06±0,07	331,1±10,5	168,67±2,53	11,32±0,16	4,96±0,85	35,84±0,94

Ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում հնարավոր չէ ապահովել դպրոցականների ուժային պատրաստության անհրաժեշտ մակարդակը:

Մանկավարժական գիտափորձի արդյունքները հաստատեցին մեր ենթադրությունը, որ հանրակրթական դպրոցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի բազային և ընտրովի բաղադրիչներիի ապահովումը, սովորողների անհատական հետաքրքրությունների և պահանջմունքների, միջավայրի ռեգիոնալ առանձնահատկությունների հաշվառմամբ, պայմաններ ստեղծեցին բարելավելու սովորողների ֆիզիկական դաստիարակության գործընթացը:

Այսպիսով՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագիրը հնարավորություն է տալիս ապահովելու ոչ միայն սովորողների բազային պատրաստությունը, այլև ընտրովի բաղադրիչի շնորհիվ, հաշվի առնելով ռեգիոնալ առանձնահատկությունները, դպրոցի նյութական բազան, շակերտների հետաքրքրությունները, հարստացնելու դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության բովանդակությունը:

Տավուշի մարզում կազմակերպված մանկավարժական գիտափորձի արդյունքները փաստում են, որ Հայաստանի Հանրապետության շրջաններում դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգի զարգացման ճանապարհներից մեկը ուսումնական ծրագրի ընտրովի նյութի արդյունավետ օգտագործման մեթոդիկան է՝ ուղղված դասային և ոչ դասային ձևերի օգտագործման համալիր մոտեցման, ուսուցման և դաստիարակության բազմազան միջոցների և մեթոդների կիրառման՝ տեղանքի պայմաններին համադրմամբ:

Այդպիսի մոտեցումը հնարավորություն տվեց՝

- բարձրացնել դպրոցականների շարժողական ակտիվությունը,
- բարելավել շարժողական պատրաստվածության մակարդակը,
- ամրապնդել առողջությունը, բարելավել դպրոցականների ֆունկցիոնալ վիճակը և ֆիզիկական զարգացման ցուցանիշները,
- ձևավորել շարժողական կարողություններ և հմտություններ, ապահովել բազմաբնույթ շարժողական գործողությունների տիրապետումը,
- շաղկապել հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման տարբեր ձևերը:

Կարևոր է նշել նաև, որ դպրոցականների մոտ բարձրացել է հետաքրքրությունը ֆիզիկական կուլտուրայի հանդեպ, ֆիզիկական վարժություններով պարբերաբար զբաղվելու մոտիվացիան:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Գրական աղբյուրների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց տվեց, որ ներկայումս շատ երկրներում ֆիզիկական դաստիարակության ծրագրերում առկա է ինչպես պարտադիր ուսումնական նյութ (բազային), այնպես էլ ընտրովի, որոնք ապահովում են դպրոցականների ֆիզկուլտուրային կրթությունը համապատասխան պետական չափորոշիչի:

2. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում անցկացված հարցումը բացահայտեց, որ ծրագրով նախատեսված ընտրովի նյութը լիովին չի դասավանդվում դպրոցում: Որպես խոչընդոտ՝ ուսուցիչները տեսնում են նյութատեխնիկական բազայի ոչ բավարար վիճակը (47,5%) և գույքի բացակայությունը (46,5%):

3. Տավուշի մարզի V-XII դասարանների դպրոցականների ֆիզիկական աշխատունակության թեստավորման արդյունքները վկայում են նրանց ցածր ֆունկցիոնալ հնարավորությունների մասին: Այսպես՝ V-XII դասարանների 54,1% աղջիկների և 44,25% տղաների մոտ բացահայտված է ֆիզիկական աշխատունակության բավարար մակարդակը: Հետազոտվող դպրոցականների միայն 2,2%-ի մոտ գրանցվել է Ռուֆիեի ինդեքսի գերազանց գնահատականը: Դպրոցականների Ռուֆիե ինդեքսի տարիքային դինամիկայի վերլուծությունը փաստում է դրա աստիճանական նվազման մասին:

4. Անցկացված հետազոտության արդյունքում բացահայտված է Իջևան քաղաքում և Տավուշի մարզում բնակվող ժամանակակից դպրոցականների շարժողական պատրաստվածության ցածր մակարդակ: Այսպես՝ ընդհանուր դիմացկունությունը գնահատող 1000մ վազքում V-XII դասարանների հետազոտվող տղաների 83,72%-ը և աղջիկների 89,96%-ը ցուցադրել են արդյունքների ցածր մակարդակ: Թեստավորման ընթացքում բացահայտվեց, որ V- VIII դասարանների տղաների 41,57%-ը չեն կարողացել գոնե մեկ վերձգում կատարել, իսկ IX-XII դասարանների պատանիների 53,8%-ի արդյունքները գրանցվել են՝ որպես ցածր: Աղջիկների որովայնի մկանների ուժային դիմացկունության ցուցանիշների վերլուծությունը ցույց տվեց, որ հետազոտվող աշակերտուհիների 84,97%-ի մոտ գրանցվել է ցածր մակարդակ:

5. Մշակվել և գիտափորձով հաստատվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդման մեթոդիկան, որի հիմքում ընկած համալիր մոտեցումը հնարավորություն տվեց համակցել ակադեմիական դասը և արտադասարանական պարապմունքները:

6. Գիտափորձով ապացուցվել է առաջարկված մեթոդիկայի կենսունակությունը, որը հնարավորություն ընձեռեց. բարձրացնել

դպրոցականների շարժողական ակտիվությունը, հետաքրքրությունը ֆիզիկական կուլտուրայի հանդեպ, ֆիզիկական վարժություններով զբաղվելու մոտիվացիան:

6.1. Երկամյա գիտափորձի արդյունքում բարելավվել է երկու փորձարարական խմբերի շարժողական պատրաստվածության մակարդակը: Առավել մեծ փոփոխություններ են գրանցվել.

ա) ընդհանուր դիմացկունության արդյունքներում, երկու փորձարարական խմբի դպրոցականների՝ տղաների և աղջիկների տվյալները զգալի տարբերվում են ստուգողականից: Այսպես՝ փորձարարական 1-ին խմբում տղաների արդյունքը 1000մ վազքում գիտափորձից հետո հավաստի բարելավվել է միջինը 90,48 վրկ., իսկ աղջիկներինը՝ 79,64 վրկ. ($P < 0,001$): Փորձարարական 2-րդ խմբում արդյունքները համապատասխանաբար աճել են տղաների մոտ՝ 94,05 վրկ., աղջիկների՝ 82,73 վրկ. ($P < 0,001$): Ստուգողական խմբում և տղաների, և աղջիկների ընդհանուր դիմացկունության գրանցված ցուցանիշների փոփոխությունները գիտափորձի ընթացքում հավաստի չեն ($P > 0,05$):

բ) երեք ուժային ստուգողական վարժությունների արդյունքների վերլուծությունը բացահայտեց փորձարարական 2-րդ խմբի երկսեռ դպրոցականների բացարձակ առավելությունը: Փորձարարական 2-րդ խմբի տղաների վերձգում վարժության արդյունքները գիտափորձից հետո գերազանցում են հետազոտությանը մասնակցած բոլոր դպրոցականների տվյալները՝ փորձարարական 1-ն խմբի տղաներինը մոտ երկու անգամ և չորս անգամ՝ ստուգողական խմբի տղաներին: Գիտափորձի ընթացքում փորձարարական 2-րդ խմբի աղջիկների սեղմումներ նստարանից վարժության ուժային ցուցանիշները բարելավվել են մոտ երկու անգամ ($P < 0,001$), փորձարարական 1-ին խմբինը՝ 6,07-ով ($P < 0,01$):

6.2. Երկու փորձարարական խմբերի տղաների և աղջիկների մոտ ֆիզիկական աշխատունակությունը գիտափորձից հետո փոխվել է միջինից՝ լավ գնահատականի: Ստուգողական խմբի դպրոցականների ֆիզիկական աշխատունակության ցածր մակարդակը հաստատում է այն կարծիքը, որ միայն ֆիզիկական կուլտուրայի դասերի մասնակցությունը չի ապահովում սովորողների շարժողական ակտիվության անհրաժեշտ ծավալը և չի անդրադառնում ֆունկցիոնալ վիճակի բարելավման վրա:

6.3. Մանկավարժական գիտափորձի արդյունքում սովորողները յուրացրեցին անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորեցին շարժողական կարողություններ և հմտություններ: Դա հնարավորություն ընձեռեց հարստացնելու դպրոցականների գիտելիքները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից՝ բազմաբնույթ շարժողական գործողությունների տիրապետումը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտահայտված են հեղինակի հրատարակված հետևյալ աշխատություններում.

1. **Давтян Р.Б., Акопян Е.С.** Состояние здоровья школьников сельских районов Республики Армения. Теория и методика физического воспитания и спорта/ Научно-теоретический журнал. Киев,-2012, N4, с.63-66.

2. **Ռ.Բ. Դավթյան.** Տավուշի մարզի դպրոցականների սրտանոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակը ՖԿՀՊԻ միջազգային 43-րդ համաժողովի գիտական հոդվածների ժողովածու: Երևան 2016, էջ 135-138:

3. **Ռ.Բ. Դավթյան** Ընտրովի նյութը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դպրոցական ծրագրում: «Մխիթար Գոշ», Երևան.- 2016.- 2 (45).- էջ 171-174:

4. **Давтян Р.Б.** Методика преподавания раздела “Силовая подготовка” вариативной части школьной программы по физической культуре/ Журнал научных и прикладных исследований.- Уфа.- 2017, N1, с.42-45.

5. **Давтян Р.Б.** Преподавание вариативного компонента школьной программы по физической культуре: состояние и пути совершенствования. Научно-практический журнал “Апробация”. Махачкала, научно-издательский центр “Апробация”.- 2017, N6. – С. 25-27.

6. **Ռ.Բ. Դավթյան** «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդման մեթոդիկան: Մանկավարժական միտք, Երևան.«Ձանգակ հրատարակչություն» - 2017.- 3-4 (66-67).- էջ 9-14:

ДАВТЯН РИТА БОРИКОВНА
ПРЕПОДАВАНИЕ ВАРИАТИВНОЙ ЧАСТИ ПРОГРАММЫ ПО
ПРЕДМЕТУ “ФИЗИЧЕСКАЯ КУЛЬТУРА” И СОВЕРШЕНСТВОВАНИЕ
ЕГО МЕТОДИКИ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02-«Методика преподавания и воспитания» (физическая культура).

Защита диссертации состоится 23-го февраля 2018г. в 14⁰⁰ на заседании действующего в ЕГУ специализированного совета 065 по педагогике при ВАК.

Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52^а, корпус факультета армянской филологии ЕГУ, 203 аудитория.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В решении проблемы совершенствования системы физического воспитания школьников первостепенное значение приобретает разработка и внедрение в процесс физического воспитания новых технологий. В этой связи особое внимание уделяется вопросам обеспечения всего содержания программы по предмету “Физическая культура”, состоящего из базового компонента и материала по выбору. Анализ научно-методической литературы свидетельствует о наибольшей разработанности вопросов преподавания базового компонента программы, недостаточно изученными являются вопросы прохождения вариативного материала программы по предмету “физическая культура” как в городских, так и сельских школах.

Поэтому исследование состояния преподавания вариативной части программы по физической культуре и разработка методики ее совершенствования является актуальной проблемой и имеет научно-практическое значение.

Цель исследования: выявить особенности преподавания вариативной части школьной программы по предмету “физическая культура” и разработать методику его совершенствования.

Научная новизна исследования состоит в том, что:

- изучены возрастно-половые особенности физического развития, функционального состояния и двигательной подготовленности школьников Тавушского района Республики Армения,
- выявлено состояние преподавания вариативной части программы по предмету “Физическая культура” в общеобразовательной школе,
- разработана и экспериментально обоснована методика преподавания вариативной части программы по предмету “Физическая культура”, в основе которой лежит комплексный подход, обеспечивающий взаимосвязь академического урока и внеклассных занятий.

Основные положения, выносимые на защиту:

1. Уровень физического развития, двигательной подготовленности и функциональное состояние школьников 5-12 классов Тавушского района

Республики Армения как условие организации физического воспитания в общеобразовательной школе.

2. Современное состояние преподавания вариативной части программы по предмету “Физическая культура” не позволяет полностью обеспечить физкультурное образование школьников.

3. Разработанная методика преподавания вариативной части программы по физической культуре, органически связав урочные и внеклассные формы организации физического воспитания в общеобразовательной школе, обеспечивает улучшение состояния здоровья и двигательной подготовленности школьников, повышение качества их физкультурного образования.

Теоретическая значимость исследования. Представленные подходы преподавания вариативной части программы по физической культуре указывают на эффективное направление повышения двигательной активности, уровня физической подготовленности и физкультурной образованности школьников. Расширены наши представления о путях совершенствования школьной системы физического воспитания.

Практическая значимость исследования определяется разработанной методикой преподавания вариативной части программы по предмету “Физическая культура”, которая позволила органически связать урочные и внеклассные формы организации физического воспитания. В результате этого повысилась двигательная активность и физическая подготовленность школьников, улучшилось состояние их здоровья, что в результате обеспечило улучшение качества физкультурного образования.

Структура и объем диссертации. Диссертационная работа состоит из введения, трех глав, выводов, практических рекомендаций, списка использованной литературы и приложений, изложена на 125 страницах компьютерного текста. Содержит 16 таблиц, 20 диаграмм, 5 приложений.

DAVTYAN RITA BORIK
TEACHING THE VARIABLE PART OF THE PROGRAM ON THE
SUBJECT OF "PHYSICAL CULTURE" AND IMPROVEMENT OF ITS
METHODOLOGY

Dissertation for the degree of Candidate of Pedagogic Sciences (PhD) 13.00.02-«Methods of teaching and education» (Physical education).

The defense of dissertation will take place on February 23, 2017 at 2.00 p.m. at the Yerevan State University, at a meeting of specialized Council on Pedagogy 065 HAC in the YSU.

Address: 0025, 52a Abovyan str., Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, Auditorium N 203.

SUMMARY

THE RELEVANCE OF THE RESEARCH. In solving the problem of improving schoolchildren's physical education system, the paramount importance is given to the development and introduction of new technologies into the process of physical education. In this regard, special attention is paid to providing the full content of the program on the subject "Physical Culture", consisting of a basic component and selective material. Analysis of scientific and methodological literature shows that the most developed are the issues of teaching the basic component of the program, insufficiently studied are the issues of the passing variable material of the program on the subject "physical culture" both in urban and rural schools .

Therefore, the study of the state of teaching the variable part of the program on physical culture and the development of methods for its improvement is an actual problem and has a scientific and practical significance.

THE PURPOSE OF THE RESEARCH: to reveal the peculiarities of teaching the variable part of the school curriculum on the subject "physical culture" and to develop a methodology for its improvement.

THE SCIENTIFIC NOVELTY OF THE RESEARCH. lies in the fact that:

- It is studied the age and sex characteristics of physical development, functional state and motor preparedness of schoolchildren of Tavush region of the Republic of Armenia,
- It is revealed the state of teaching variable part of the program on the subject "Physical training" in a secondary school,
- It is developed and experimentally substantiated the teaching methodology of the variable part of the program on the subject "Physical Culture", which is based on an integrated approach that ensures interrelation between academic lesson and extra-curricular classes.

BASIC PROVISIONS FOR DEFENSE

The level of physical development, motor preparedness and functional condition of schoolchildren of 5-12 classes of the Tavush region of the Republic of Armenia as a condition for organizing physical education in a secondary school.

1. The modern state of teaching the variable part of the program on the subject "Physical Culture" does not allow fully to provide physical education of schoolchildren.
2. The developed methodology for teaching the variable part of the physical culture program, organically linking the lesson and extra-curricular forms in organizing physical education in a secondary school, provides health improvement and motor preparedness of schoolchildren, raises the quality of their physical education.

THE THEORETICAL IMPORTANCE OF THE RESEARCH. Presented approaches to teaching the variable part of the physical culture program expanded the concept about the improvement of physical education in the school system.

THE PRACTICAL IMPORTANCE OF THE RESEARCH. is determined by the developed methodology of teaching the variable part of the program on the subject "Physical Culture", which allowed organically to link the lessons and extra-curricular forms in organizing physical education. As a result, the motor activity and physical preparedness of schoolchildren has increased, health improvement was provided, which resulted the raise of quality of physical education.

THE STRUCTURE AND VOLUME OF THE DISSERTATION. The dissertation consists of introduction, three chapters, conclusions, practical recommendations, list of references and applications, written on 125 computer pages. It contains 16 tables, 20 diagrams, 5 applications.

